

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

թիվ 37

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղանցիկ	ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Կնոջ մը յիշատակին	ՕՐ. ԵՒՓԻՄԷ ՕՏԵԱՆ
Աբելաձազն յԱրմաւ	ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ
Նմոյս մը՝ Կոնստանդնուպոլսէ (քարգմ.)	ԳՐ. ՄԱԼԽԱՍ
Անուանող (Բանաստեղծութիւն)	Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Մտքիս երգերը (» »)	ՀՐ. ՆԱԶԱՐԵԱՆ
Բարիքին յաւատարմութիւն	ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Զանազանք

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրիւնն է Կ. Պոլսոյ համար հառաւել զԵ. Կ. զաւառներուն համար յիշուն զԵ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Թրանք կամ 5 րուպի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ըլլէ ամեն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասջելի պայմաններով:

Զեմ-Բէ ԿԸ ՇԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیّه ده غلطه ده (ماسيس) غنّه سى اداره سى

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլս, Հալապիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաբուսական

Թելը, որ այսօր գրեթե բոլոր մարդ-
վերջաց գլխավոր ըմպելիին դարձած է,
ա՛յնքան բաղձաթիւ տեսակներ ունի որ,
արդարեւ գործածողներուն համար բաւա-
կան դժուար է լու ընտրութիւն մը ընել:
Այդ տեսակներէն սմանք նշանաւոր են
իբր Թորթահամ եւ քաղցրաբոյր, սմանք
ալ թէեւ նոյնքան ախորժելի համ ու հոտ
չունին, գերազանց են սակայն իբր կազ
դուրիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրա-
քանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն
ունին որոնք զինքը կը զանազանեն ու-
րիչ, տեսակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ
այդ յատկութեանց ամէնէն
կարեւորները կը միացնէ իր
վրայ, այսինքն՝ գոյն, համ-
հոտ եւ մանաւանդ կազ,
դուրիչ եւ զօրացուցիչ ան-
դուգական ազդեցութիւն
մը, եւ այդ թէյն է ճաբո-
նի թէյը, որ այդ յատկու-
թեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարի-
քի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ
կողմակի եւ ամէն ճաշակի:

Յալբուխան եւ Իսազուլխան թէյի մեծ
վաճառատունը, իր բաղձաթիւ յաճախոր-
դաց ծառայութիւն մը մատուցանելու հա-
մար, այս առիթով մեծաքանակ ներածած
է ճաբոնական զուտ թէյ մասնաւոր եւ
դոկական աւափերով ու կը հրաւիրէ օգ-
տուիլ այս առիթէն բոլոր անունք, որ կը
փոփոքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ
կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկա-
կան, չինական, Սէյլան եւ Ճապոնի ամե-
տաւ տեսակ թէյեր:

2-10

Ուսադուրսիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնի-
աբու (gynécologue), Տօքթօր Էմիրզէ
որ 15 տարուան գործունէութեամբը մեծ
համբաւ ստացած է, կը ծանուցանէ յոր-
դալ յաճախողներուն թիւ բնակաւայր
փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18.
Բաց ի վերադիշեալ իւր մասնագիտութենէ
կը բուժէ նաեւ նորագոյն մէթոտներով
լղային եւ հագեկան ու երեւակայական
ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս
նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի
երեսի եւ ուսերու ագեղ եւ ալամայ
չարժանիները եւ դաշտանի դադարումէ
յառաջ եկած լղային խռովումները եւ
յրիտասարդական մօլիքները, ինչպէս
նաեւ գինեմօլիքը, մօրիֆնամօլիքը եւայլն:
Կիրակիներէն զառ ամէն օր կէսօրէն
սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն
դունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը
դարմանէ վկայեալ աղքատները: 2-10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղսնիք գեղեցկութեան. Առողջու-
թեան եւ Երկայնակեցութեան: Բրաք. Պոյ-
լէյնըրտէ: Թարգմանեց Անգլիերէնէ, Սա-
մուել Գ. Վարժապետեան, Կ. Պոլիս.
Տպագրութիւն, Յ. Մաթթեոսեան, 1905:

Հեռաքցրալուծ, հրապարիչ, զրօ-
սալի եւ ամէն տեսի ու հասակի յօյժ պի-
տանի գրքով մը 248 երեւներէ բաղկա-
նալ: Թղթակաղ ին գինն է 8 դահ.:
Լաթակաղ միւր՝ 10 դահ.: 10է աւելի
գնողներու 15 առ հարիւր եւ 50է աւելի
գնողներու 20 առ հարիւր գեղչ: Վաճառ-
ման կեդրոնաւորներն են Յ. Մաթթեոս-
եան Թղթավաճառանոցը եւ Պրէկնր գրա-
տանը:

2-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։ Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՍԻՆԿԵՐԻ
ՄԱՍԿԻՆԵՐԻ
ՄԱՍԿԻՆԵՐԻ
ՄԱՍԿԻՆԵՐԻ

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍԼԱՍԹԱ.

1. Սինկեր Խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՐՏԱՐ

Չարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի։

Կատարեալ երաւիաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը։

ՀԻՄՆԴՈՒԹԻՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶՅՐՈՒԹԻՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմինը տկարացուցած և ընդհանուր անզօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդո զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զինքը շուտմը կատարեալ առողջութեան հասցընէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւասարը չիկայ: Ասիկայ թէ ախորժակ կուտայ և թէ մարսողութիւնը կը շտապէ. Մարմինը կը զարգացընէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղութիւնը կը վերականգնէ և հիւանդութեան դիմադրելու համար ընդհանուր դրութեան զօրութիւն կուտայ: Բագօթի Բաղադրութիւնը թէ կերակուր և թէ դեղ է. և տկարացած դրութեան մը կարօտ եղած միս և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ. և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգիւ զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջէ դրութիւնը երբ միս և զաւալ կը կորսնցնէ և հետեւապէս շուտմը պիտի կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւրաւ զտ հ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, այժի փառնումը կը դադրեցնէ և առողջատես միս կը կազմէ: Ընդ միշտ վարդագոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը քանդուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր գեղատեսիլները և գեղալուստները ին Ժախին:

ՅՈՒՇԱՏԵՏՐԳՐՊԱՆԻ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Որ միեւնոյն ասեմ թուրքերէն, հայերէն, գաղղիերէն եւ յունաւէն լեզուներով Օրացոյց ըլլալէ զաս գործի մաքոց համար կարգ մը կարեւոր ծանօթութիւններ կը պարունակէ:

Գին Պարզ կազմ 3 դրուշ. — Ընթիւ շաբակազմ 5 դրուշ. — Կաշեկազմ ոսկեգոծ 8 դրուշ.

Յ. Մասթեոսեան տունը այս օգտակար հրատարակութեան գծած լաւ ընդունելութեանէն գոհ, այս տարի նոյնին աւելի ընդարձակն ալ հրատարակած է՝ այսինքն իւրաքանչիւր էջը մէկ օրուան յաշկացուած:

Գին Պարզ կազմ 5 1/2 դրուշ. — Ընթիւ շաբակազմ 8 դրուշ. — Կաշեկազմ ոսկեգոծ 12 դրուշ.

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՅՈՒՇԱՏԵՏՐ մեծ դիրքով, սեղանի համար, նոյնպէս չորս լեզուաւ, կարեւոր ծանօթութիւններով եւ հաշուետումարի ձեւով գծուած, տկուն անգղիական լաթակազմ գին 7 դրուշ.

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Թղթալանառանցքը, Թիւ 27, Ֆինանսըլար, Կ. ՊՈԼԻՍ.

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառներու բոլոր թղթալանառանցքներու եւ գրավաճառներու մոլ:

ԱՄԱՆԻ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 37

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԳՐԱԿԱՆ ՆՈՇԵՐ

Մեր օրաթերթերը բաւական լայն տեղ մը տուին այս օրերս կենսագրութեանն ու գործերուն անգլիացի բանաստեղծ Ուիլիէմ Շարբի որ մեռեր է Սիկիլիոյ մէջ։ Օտար նշանաւոր գրագէտներ ու քերթողներ կան զորս իրենց մահէն վերջը միայն կը ճանչնայ ու կը ծանօթացնէ հայ մամուլը՝ իր ընթերցողներուն, և անոնցմէ մէկը եղաւ նաև Ուիլիէմ Շարբ։ Այս մոռացութիւններուն կամ զանցառութիւններուն մէջ մեր բաժինը ունինք ամէնքս ալ, — թերթերու վարիչ, խմբագիր, և այլն, — վասն զի նիւթապէս ու գրականապէս այն ծաղկման ու զարգացման աստիճանին չէ հասած լրագրութիւննիրս, որ Օտար էջերու կանոնաւոր ու շարունակական գլուխ մը ունենանք՝ հոն պատկերացնելու համար հետզհետէ ֆրանսացի, անգլիացի, գերմանացի, իտալացի, ամերիկացի և այլ ժամանակակից մեծ հեղինակներ, իրենց լաւագոյն արտադրութիւններէն նմոյշներով։ Այս տեսակ ուսումնասիրութեանց շարքի մը համար՝ հարկ պիտի ըլլար որ լեզուագէտ ու բազմակողմանի հմտութեան տէր աշխատակիցներ՝ դասական ուղղութեամբ մը և մէթոտիկ կերպով գրէին, արտադրէին, ու իրենց աշխատութիւնը վարձատրուէր արժանապէս։ Շատ քիչ թերթեր կան որոնք այս «պերճանք»ը համապատասխան կը գտնեն իրենց պիւտճէին, թէև ըլլայ ան անշուք «պերճանք» մը, չըսելու համար վտիտ վարձատրութիւն մը։ Ասով հանդերձ, զայն իրականացնել յաջողած թերթերը լրագրական բարձրութիւն մէջ յառաջդիմութեան քայլ մըն է որ կ'առնեն ու ռահվիրայ մը կը հարթեն, որուն համար չնորհաւորելի են։

Մեծամասնութիւնը, սակայն, կը գոհանայ պատուակալ աշխատակիցներով ու պատահական ուսումնասիրութիւններով։ Եւ պէտք է խոստովանիլ՝ ի պատիւ այդ աշխատակիցներուն և այդ ուսումնասիրութեանց հեղինակներուն, թէ իրենց գրական արտադրութիւնները փոխարինուած չըլլալուն համար, — որուն պէտք չունին արդէն՝ իրենք տարբեր ասպարէզներս մէջ դիրք մը ունենալուն, — նուազ գեղեցիկ, նուազ հմտալից ու նուազ հետաքրքրական չեն։ Այսպէս, օրինակի համար, Շէլլիի ու Լոնկֆէլտի վրայ Մասիսի մէջ երեւցած ուսումնասիրութիւնները՝ իրենց ոտանաւորներէն թարգմանուած թիւներով, ու նախորդ տարեշրջաններուն ալ՝ ուրիշ ձեռնհաս աշխատակիցներու կողմէ զանազան հեղինակներու վրայ գրուածներ ու թարգմանածոյ նմոյշներ, մեծ օժանդակ մը եղան մեզ՝ գրական լաւագոյն մակարդակի մը վրայ պահելու այս թերթը։ Ուրիշ պարբերականներ և օրաթերթեր ալ նոյնպէս, իրենց սահմանին մէջ, առաւել կամ նուազ։ Անցեալ տարի, այս միջոցներուն, երբ պահ մը օրուան հարց եղաւ, մեր թերթերէ ոմանց համար, «վճարուած աշխատակցութեան» խնդիրը, — զոր յարուցանողներուն համար trust բացատրութիւնը գործածեցին զուարթ գրիչներ, մտերմական կատակով մը, — չի քաշուեցանք անկեղծապէս յայտնելէ մեր դաւանանքը որ պատուակալ աշխատակցութեան ջատագով էր, մանաւանդ սա մտածումով թէ համբաւի ու արժանիքի տէր գրագէտի մը կամ բանաստեղծի մը ինքնաբեր յարումը ու աշխատակցութիւնը այս կամ այն թերթին՝ մասնաւոր պատիւ մը ու

գնահատման նշան մըն էր, որմէ շատ բան պիտի պակսեցնէր վարձատրութեան խայծը։ Թէ՛ եւրոպեան ու ամերիկեան լրագրութիւնը լիառատ կը վճարէ իր բոլոր աշխատակիցներուն, արձակին ու ոտանաւորին համար հաւասարապէս, ո՞վ չգիտեր։ Բայց անոնք ալ ի՛նչ կը շահին և ի՛նչ լեցունկեկ վարձատրութիւններ կ'ընեն։ Վերջերս, Տոքթ. Յ. Թօփսէան Բիւզանդիոնի մէջ խօսելով Գերմանիոյ կին գրողներուն կամ գրագիտուհիներուն վրայ, ծանօթացուց անոնց ստացած վարձատրութեան աստիճանացոյցը, — յարակից ծանօթութիւններով, — որ շահեկան էջ մըն էր։ Այդ յօդուածը կարդացողներէն՝ լրագրութեամբ ու գրականութեամբ պարագողները մասնաւորապէս խորհեցան թե՛րեւս թէ, քանի որ այդ կին գրողներէն մէկ հատին միայն յօդուած գլուխ ստացած վարձատրութեան նուազագոյն չափին հազիւ պիտի հաւասարէր մեր այդ գրողներէն մէկըաններուն միանգամայն ստանալիք վարձատրութեան համագումարը, — եթէ արդէն իսկ այնպէս չէ, — լաւագոյն չէ՞ շարունակել նախամեծարութեան տալ պատուակալ աշխատակցի դրութեան։

Բայց քիչ մնաց մոռնայինք Ուիլիեմ Շարբը, որուն գրական կեանքին մէկ դրուածքը եւրոպեան մամուլին չրջանն ընելով՝ մինչև մեզի կը հասնի։ Այս Սկովտացի բանաստեղծը 1894ին քմահաճոյքը ունեցեր է, իր իսկական ստորագրութեամբ հրատարակածներէն զատ, Միս Փայօնա Մաք Լաուտաղջկան ծածկանունով արձակներ ու ոտանաւորներ ալ ղրկելու անգլիական թերթերուն և առանձին հատորով հրատարակչներու որոնք զմայլանօք ընդունելով իր ձեռագիրները՝ պայմանաւորուեցին հետը ու լիառատ վարձատրութիւններ յատկացուցեր, առանց սակայն իր իսկութիւնը ձանձնալու։ Հետաքրքրականն հո՞ն է որ, Ուիլիեմ Շարբ և Օր. Փայօնա Մաք Լաուտ զիրար կը քննադատէին երբեմն լրագրութեան մէջ։

Բանաստեղծը իր գաղտնիքը պահեց տասնըմէկ տարի, ու վերջերս միայն, իր մահէն

քանի մը օր առաջ յայտնեց իր մտերիմներուն որոնք հրապարակեցին զայն։ Անգլիոյ գրական շրջանակներուն մէջ, ողբալով հանդերձ Ուիլիեմ Շարբի մահը, շատ կը զուարճանան այս առեղծուածին յայտնութեամբ։ Ու մանրավէպերը կը վխտան, շատեր սիրահարուեցին եւ եղբւր այս Սկովտուհիին, ուրիշներ այնքա՛ն աշխատեցին զայն գտնելու, լուսանկարը խնդրեցին եւ պատկերազարդ թերթերու համար, դեռ ո՛ր մէկը։

Մենք ալ չունեցանք, երկու—երեք տարի առաջ, «բանաստեղծ օրիորդ»ի առեղծուածը՝ մեր գրական հրապարակին վրայ։ Համեմատութիւնները շատ հեռու են իրարմէ իրա՛ւ, տաղանդի, հմտութեան, արժանիքի տեսակէտով, ու մանրանկար նմոյշ մըն է միայն պատմելիքիս, ասով հանդերձ ազդած հետաքրքրութիւնը պահ մը բաւական բուռն եղաւ։ Մե՛ղք որ Ուիլիեմ Շարբի մը համեմատութիւնը չունեցաւ պատանի բանաստեղծը, այժմ երիտասարդ, որ բաւական ատեն ստորագրեց Մառի Յովհաննէսեան։

Մասիսի մէջ էր, եթէ չենք սխալիր, երբ առաջին անգամ երեւցաւ այս ստորագրութեամբ ոտանաւոր մը, որ ընթերցողներուն ուշադրութիւնը հրուիրեց՝ աղջկան մը կողմէ գրուած ըլլալուն համար։ Յաջորդին՝ սկսան հարցնել իրարու.— «Ո՞վ կըրնայ ըլլալ այս անծանօթ օրիորդը որ այնքան սիրուն կերպով կը գրէ»։ — Այդ թուականին կանանց յատուկ շաբաթաթերթը գոյութիւն չունէր տակաւին որ չըզգեստաւոր բանաստեղծներն ու սկնակ գրագիտուհիներն հոն կատարէին իրենց stageը, և վաղածանօթ քանի մը կին գրողներու անունը կար միայն, — Կաղանդի թիւերու մէջ փայլող, — որոնց մէջ յատկանշանական տեղ մը եկած էր գրաւել, մէկ երեւումով, մանկամարդ ու տաղանդաւոր գրագիտուհի մը, Տիկին Զապէլ Եսայեան։

Իսկ Մառի Յովհաննէսեանը...

Զարմանալին հոն է որ, բանաստեղծ օրիորդին իսկութիւնը չգիտցողներուն առաջինը Մասիսի խմբագրութիւնն էր։ Իր ձեռագիրները կը ստանայինք՝ փոքրածաւալ

թերթիկներու վրայ, սիրուն պահարաններու մէջ դրուած որոնց անուշահոտութիւնը միայն կը պակսէր՝ հրապոյրը կատարեալ դառնալու համար։ Ոտանաւորին յաջորդեց արձակը, եւ Մառի Յովհաննէսեան «Աղջկան մը Օրագիրը» խորագրին տակ սկսաւ զրկել մեզ շարք մը՝ գրական, կնոջական, գեղարուեստական նօթերու որոնց մէջ փափուկ բան մը կար միշտ, ու մեղամաղձիկ ղգացումներ։ Օրաթերթերն ու պարբերականներն սկսան հետաքրքրուիլ իրմով եւ մինչեւ իսկ պճեցին թէ այս կամ այն օրիորդն է, որուն կողմէ հերքումը կը հասնէր իսկոյն։ Գրողներ գտնուեցան որոնք փորձեցին դարպաս ընել անոր, իրենց գրիչովը, և հոսկէ հոնկէ հոնկէ նամակներ ալ կը հասնէին խմբագրատուն՝ իրական դարպաս ընողի ոճով ու հասցէն գիտնալու հետաքրքրութեամբ։

Այս այսպէս շարունակեց երկու տարիի մը չափ։ Մառի Յովհաննէսեան, իր արտաքին հմայքը պահելով հանդերձ, Մասիսի խմբագրութեան համար տակաւ տակաւ կը դադրէր աղջկան մը պատրանքը տալէ։ Իր յօդուածները կը սկսէին հասնիլ՝ դպրոցականներու գծաւոր թուղթի վրայ գրուած, քիչ մը հաստեկեկ գիրերով, ճմրթկուած, մեծկակ պահարաններու մէջ։ Աղջիկ մը չպիտի հրաժարէր այդ պլորոդութենէն։ Եւ սակայն կ'ուզէինք որ իրօք աղջիկ մը եղած ըլլար, կամ եթէ «պիսաւոր օրիորդ» մըն էր, ինչպէս կ'ըսեն հիմայ, չգիտնայինք իսկութիւնը։

Շուտով հմայաթափ եղանք, աւա՛ղ։

Առտու մը, երբ խմբագրատան մէջ կը սպասէինք Մառի Յովհաննէսեանի ոտանաւորին կամ արձակին, — վասնզի սովորաբար երկուշաբթի օրերը կը զրկէր, — մեր աշխատակիցներէն Մ. Ա. Պարսամեանեանը ներկայացաւ և բանաստեղծութիւն մը կարկառելով՝ իր սովորական ժպիտը չրթունքը աւելցուց։

— Կրնաք կա՛մ իմ ստորագրութեամբս հրատարակել և կա՛մ... Մառի Յովհաննէսեան ստորագրութեամբ։

— Բայց ինչպէ՛ս։

— Զիմացա՞ք «Աղջկան մը Օրագիրը»ին տէրը ես ըլլալս. ա՛լ եւս մէջտեղ հանեցի. ուրիշ խմբագրութիւններ գիտեն։ Եւ կարծեմ Մանգուսի մէջ ալ պիտի հրատարակուի, ուր այնչափ հետաքրքիր էին։

Ուզեցինք հերքել, չի հաւատալ. բայց ինքը հաստատեց։ Մ. Ա. Պարսամեանն ալ գաղտնի գրիչ մը ունի, բայց իր ստորագրութեամբ գրուածք մը Մառի Յովհաննէսեանի քօղին տակ գրուածքի մը դիւթանքը չէր կրնար պատճառել, որուն շուրջ այնքան աղմուկ յարուցուած էր մեր լըրագրութեան մէջ։ Վերջ ի վերջոյ հարկ եղաւ տեղի տալ իրականութեան ու փարատել ամէն տարակոյս։

Հմայքն ալ միասին փարատած էր սակայն։ Մասիսի համար հաւնուած աշխատակցուհի մը կը պակսէր և ընթերցողներուն համար բանաստեղծ օրիորդ մը։

Յաջորդ թիւով պիտի հրատարակենք ԼԱՄԱՐԴԻՆԻ ԱՏԱՆՈՒԹԻՒՆ քերթուածին գրաբար թարգմանութիւնը՝ ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆԷ։ Նոյնպէս, մօտաւոր թիւով մը, բանաստեղծութիւն մը՝ ԱՂԵՔՍԱՆԴԻ ՓԱՆՈՍԵԱՆԷ։

Երիտասարդ ջութակահար Պ. Հայկ Կիւտէնեան, որ ծանօթ է Կ. Պոլսոյ մէջ տուած մէկ քանի նուագահանդէսներովը, եւ որ՝ իր արուեստը կատարելագործելու համար Եւրոպա գացած էր, Մանչէսթըրի հայ վաճառականներու փափագին վրայ՝ Նուագահանդէս մը սարքեր է այդ քաղաքին մէջ, յաջող արդիւնք մը ձեռք բերելով։

Երուսաղեմի վանքին ելմտական տեսուչ Տ. Մատթէոս վրդ., որ շաբթուս սկիզբը մայրաքաղաքս ժամանեց, չորեքշաբթի Խառն Ժողովին ներկայանալով՝ հաղորդեց Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին հայրական բարեւները։

ՏԻԿԻՆ ԳԱՅԻԱՆԷ Մ. ՍՍԼԱՆԵԱՆ

ԻՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դէմք մըն ալ անհետացաւ մեր համայնքին իգական սեռէն. աղնուական դէմք մը՝ սիրուած, յարգուած, ոչ միայն իր զաւակներէն, իր ազգականներէն, այլ նաեւ ամէն զինքը ճանչցողներէն:

Սովորական կին մը չէ՛ր Տիկին Գայիանէ Ասլանեան: Հակառակ ուսեալ չըլլալուն, բնականէն ա՛յնքան մտաւոր կարողութիւն ունէր, որ կրնար վարել ոչ միայն տուն մը, ընտանիք մը, այլ նաեւ այր մարդու յատուկ առևտրական գործ մը: Առաջին անգամ զինքը տեսնողին համակրութիւնը կը գրաւէր և յարգանք. կ'ազդէր անոր: Իր կանացի քաղցր բնաւորութիւնը՝ խառնուած առնական կորովի մը, կը գրաւէր ու կը հիացնէր ամէն իրեն հետ տեսնուողները: Մարդ կը զարմանար իր նուրբ կազմուածքին տակ այնքան աշխոյժ, այնքան կորով, այնքան կամեցողութիւն տեսնելով:

Եւ դուկեացի մեծափարթամ ընտանիքի մը դուստր՝ Տիկին Գ. Ասլանեան իր մանկութեան տարիները ճամբորդութիւններու մէջ անցուցած է, որոնք իր մատաղ միտքը զարգացուցած են գործնականապէս: Հայ կիներուն մէջ քիչեր անոր չափ ճամբորդած են. այցելած և բնակած է ատենօք զանազան նահանգներ ինչպէս նաեւ Ֆրանսա, Եւրոպա:

Իսկուարի հասակին մէջ Պոլիս եկած ամուսնացած է, ուր մնացած է մինչև կեանքին վերջը, մերթ ընդ մերթ սակայն նոր նոր ճամբորդութիւններ ընելով:

Իրեն սկզբունք ըրած էր օգտակար ըլլալ ամէն իրեն մօտեցողին, խրատել, խրախուսել, մխիթարել ամէն անոնք որ կարօտ էին: Զարգացումը կը սիրէր, գեղեցիկը կը պաշտէր: Անգամ մը Անտիոքի մէջ ուր ագարակ ունէր, գիւղերը այցելած ատեն կը տեսնէ թէ գիւղացի կիները հայլիի գաղափարը չունէին: Տիկին Գայիանէ իր յաջորդ ճամբորդութեանը դէպի Անտիոք,

բաղմաթիւ փոքրիկ հայլիներ կը տանի, գիւղացի կիներուն բախելու համար, որպէս զի յառաջդիմութեան շաւղին մէջ դնէ զանոնք:

Անտիոքի կամ շրջակայ գիւղերու հայ քահանաները, ամէն անգամ որ իրենց եկեղեցին պակաս մը ունենար, զգեստ, պատկեր, և ինչ, Տիկին Ասլանեանին կը դիմէին, և ան պէտքերնին կը հոգար, եթէ ինք հոն ըլլար կամ եթէ հոս գտնուէր:

Հանգուցեալ Տիկինը հանրային բարեգործութեան մէջ ալ մաս ունեցած է ժամանակաւ: 1864 թուականին, Տիկին Էպրու Գարաքէհեայի հետ Ազգ. Հիւանդանոցի խնամակալութիւնը ստանձնած և արդիւնաւոր շրջան մը բոլորած է: Երբ հանգուցեալ Սրբուհի մայրապետ Գալփայեան՝ աղջկանց որբանոց մը հիմնելու դիտաւորութիւնը ունեցաւ, Տիկին Գայիանէ Ասլանեան օժանդակեց անոր ոչ միայն նիւթապէս, այլ նաեւ բարոյապէս. մտածեց այնպիսի միջոցներ, որոնք աւելի արդիւնաբեր կրնային ըլլալ այդ Հաստատութեան համար: Երկար տարիներ վարեց Սասգիւղի Որբանոցին խնամակալութիւնը և անոր բարեբարներէն եղաւ: Կը յիշեմ, երբ ճիշդ քսան տարի առաջ, ողբացեալ Տիկինին հետ, Որբանոցի տօնին առթիւ, Հաստատութիւնը կ'այցելէի, Սրբուհի մայրապետ ինչ գուրդուրանքով, ինչ յարգանքով կ'ընդունէր իր գործին առաջին բարեկամը, առաջին նպաստողը: Տիկին Ասլանեան վարած է նաեւ ժամանակաւ Սասգիւղի աղջկանց վարժարանի խնամակալութիւնը: Իր հանրային ամէն գործերուն մէջ ոչ միայն, իրեն կին, կանանց յատուկ մասերով կը զբաղէր, այլ մանաւանդ այր մարդու յատուկ գործերով. Հաստատութեան ներքին կարգ ու սարքէն աւելի՝ դրամական մասը զինքը կը շահագործէր. կը ջանար Հաստատութեան եկամուտը աւելցնել և ապահով վիճակի մէջ դնել զայն, ու կը յաջողէր:

Ահա այսպիսի բաղմոգուտ կին մըն է զոր կ'ողբանք, և որուն նմանին քիչ անգամ կը հանդիպինք մեր կեանքին մէջ:

ԵԻՓԻՄԷ Պ. ՕՏԵԱՆ

ԱՐԵՂԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ

ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Եւ կ'երգէր :

Այո՛ և միշտ կ'երգէր Արսէն վարդապետ : Ծարական և տաղարանի սիրահարն էր ան : Այս սէրն էր որ զինքը մղեց ձայնագիտութիւն ուսանելու Պապա Համբարձումէն : Եւ այս ճիւղին մէջ այնքան յառաջացաւ, որ մեծաւ բերկրութեամբ կը խնդար և անպատում ցնծութեամբ կը զուարճանար, երբ կը լսէր «նոթածի Հայր սուրբ» Խորադոսր որ իրեն կը տրուէր, թէ և շատ անգամ հեգնօրէն :

Եւ կ'երգէր :

Այլ շատ անգամ տրամութեան չեղտմբ, մեղամողձիկ վանգիւն մը կը խառնէր իր անուշիկ եղանակներուն մէջ, որով կ'ուզէր հասկցնել թէ այս փորձանաւոր աշխարհիս մէջ ինքն ալ գերծ չէ եղած փորձութենէ մը, որմէ ընկճուած կը տառապէր տակաւին :

Եւ կ'երգէր. այլ ի՞նչ կ'երգէր : — Այն Ծնորհալիական տխրանուագի մէկ կտորիկն, որ ապաշխարութեան օրերու առաւօտները մեր ժամերուն մէջ կ'երգուի :

Երբ հարց կ'անէր Վահան վարդապետ թէ ի՞նչու զայն յաճախ կը յեղիեղէ, տխրօրէն կ'եղանակէ, կը պատասխանէր ան :

— Ետնանձեցան և խաւարեցին զիս :

«Ինչի՞դ նախանձեցան» :

— Դպրեւանքէս առաջ հոս Ժառանգաւորաց վարժարան մը կար. կէս—տեսուչ էի հոն : Օր մը վաճառուեցայ :

«Կնիկդ հե՞տք էր» :

— Այն ատեն կնիկ չունէի, տիրացու էի, ամուրի էի :

«Ի՞նչու վաճառուեցայ» :

— Տղաքները կ'ոլլոտէին և նախանձոտներս վանաճայր խորէն Սրբազանը համոզեցին լոլլոզեցին, որ վաճառուիմ, եթէ տղոց ոլլոտութիւնը չջնջեմ :

«Յետոյ» :

— Լսեցի որ Ստամպուլ, Կէտիկ փաշայի

գլուխը, Կիւմիւշեան դեղարան մը կայ, որ միջատասպան փոշի կը ծախէ :

«Բայց ոչիւր միջատ չէ» :

— Դու միայն կաս յերուսաղէմ : «Նստեալ չէ և յաւանակի նորոյ» գացի Ստամպուլ, փնտռեցի, և ուր ուրեմն լսեցի թէ միջատասպան փոշիին հնարիչը պիտի ծնի 140,000 տարի յետոյ :

Բարկութենէս դարձայ, դեղէ գեղ, տնէ տուն պտտեցայ թափառեցայ, և օր մը երբ տեսայ Զուրկը մուշմուլայի ծառի մը տակ, Տէօնկէլ, խելայեղեցայ :

«Զուրկն ո՞վ է» :

— Աղջիկ մը, որուն անունը Զուրկ դրած էին գիւղացիք, տեսնելով որ կըս—կըր, ճերմկուկ էր ան, հաւու փորէ նոր աշխարհք եկած հակթի պէս : Սիրահարեցայ և երգեցի : «Ի՞նչ երգեցիր» :

— Անգիւր Դպրութենէն սա տաղը .

«Հուր ակնարկէդ հոգիս խորվեր,

Հոգիս խորվեր, քէպապ եղեր,

Քէպապ եղեր, իւղս է հալեր,

Իւղս է հալեր, քեզ է օծեր .

Ո՛հ, Զուրկըս,

Արեւիկըս» :

«Յետոյ» :

— Աղջիկն իսկոյն հափափեցի, շալկեցի, փախուցի և . . .

«Վա՞նք բերիր»

— Եազմա՞ կայ. գիւղ տարի, հոն պսակուեցայ. միտքս դրի տէրտէր ըլլալ, բայց վարդապետ եղայ :

«Ի՞նչու վարդապետ եղար»

— Միտքս դրի որ այս վանքի այն վարժարանին մէջ, որուն տեսչութենէն զրկուած էի ոլլոտներու երեսէն, պատիւս շտկեմ՝ հին պաշտօնս վերստանձնելով : Բայց վարդապետ եղայ չեղայ՝ վարժարանն այրեցաւ. վանահայրը Պատրիարք եղաւ, Օրմանեան Սրբազան եկաւ, և Դպրէվանքը բացուեցաւ. բայց ես . . .

Արսէն վարդապետ ընդհատեց խօսքը և սկսաւ լսլ, որուն ըսաւ Վահան վարդապետ :

«Կուլա՛ս, հայր սուրբ» :

— Այո՛ կուլամ, վասն զի ես բացը մնացի, ինչպէս Զուրկս փոսը, իմին ալ հավէտս փորս մնաց :

«Օրմանեան Սրբազանի չբացի՞ր սիրտդ» :
— Խասկալը ցոյց տուաւ ինձ, ըսելով .
«Հոս կէս — տեսուչ ըլլաւ կ'սւղեւս, հոն գնաւ և
հոն եղիր տեսուչ և վերատեսուչ» :

«Գացի՞ր» :

— Դուն ծարն ես ծրարոցին . հոն դպրոց
չկար, չինեցի, մկրտեցի, կնքեցի, աղջիկներ
բուս կողմին անունը ԶՈՒԻԿ դրի, իսկ ման-
չերունը ԱՐՍԷՆԵԱՆ :

«Աղէ՛կ» :

— Բայց աւա՛ղ, վասն ծովացեալ մեղաց
իմոց օր մը դպրեվանքցիները փճացուցին
նորակերտ ձեռագործս, նորաչէն վարժարանս :

«Ի՞նչու» :

— Վասն զի նախանձը դրդեր էր Դպրե-
վանքի ժողովածուները, որոնք պար առ-
եալ չընկալեալ փորձեցին քանդել վար-
ժարանս :

«Խեղճիկը հոն չէ՞ր» :

— Դուրեանքը, որուն անունը ևս Նղիշ
դրած էի, թէ և Կեռնդ էր բուն անունը,
իր հոգեւոր ծնողին — Դուրեան Սրբազանին
նմանակը ըլլալուն համար, աղաչեց թախան-
ձեց որ չքանդեն, այլ միայն թէ անունս ու
կինս ջնջեն :

«Բայց ի՞նչու քանդել կ'ուզէին» :

— Իբր թէ ես չինած չըլլամ դպրոցը և
Զուիկ — Արսէն դրած ըլլամ անունը :

«Ո՛վ հապա չինեց» :

— Դիւղին էլէրն ու գոմէշները քար
փայտ կրեցին, գիւղացիները աշխատեցան,
քարն ու փայտ զետեղեցին, դիւղեցին, կու-
տեցին և չէնքը լմնցուցին :

«Դուն ի՞նչ կ'ընէիր» :

— Կ'երգէի :

«Կ'երգէ՞իր» :

— Այո կ'երգէի : Ես կ'երգէի, անոնք կը
դժոնտուին, ես կը ցատկուտէի, անոնք կը
պարէին : Բայց լմնցաւ չէնքը . դուն ան
նայէ :

«Բայց ի՞նչպէս անուն կը դնէիր չէնքի
մը, զոր դուն կառուցած չէիր» :

— Օհօ . այդ ալ խօսք է : Ըսէ . Չար-
խափան Աստուածածինը ի՞նք չինած է այս
վանքը, որ իր անունովը Չարխափան Ս.
Աստուածածնի վանք կ'ըսուի :

«Օրինակդ գէշ չէ . չհասկցուցի՞ր անոնց
թէ այդ իրենց ըրածը ապօրէն է» :

— Ականջ ունէ՞ի՞ն որ լսէին . անուանս ու
կնկանս վերաառութիւնը կրող խոշոր տախ-
տակը վար առին, ու կոտորեցին : Այն օրէն
ի վեր մինչեւ ցայսօր կուլամ եւ կ'ողբամ :
Ահ . նախանձոտները :

Եւ ես որ լոյս էի կնիկովս, որմէ զրկու-
եցայ, լոյս պիտի ըլլայի դպրոցովս, որմէ
ևս զրկուեցայ, և հիմա ալ ի՞նչ ունիմ մխի-
թարանք :

«Աղջիկ — Մինասը» :

— Աւա՛ղ, ան ալ շատ անգամ կը տրտմե-
ցնեմ, երբ կը տեսնեմ սա տիրացու Պախա-
ճուխցին, այժմ Թորգոմ վարդապետ, եւ
լալագին կ'ըսեմ . «Մինաս աղբարիկս, քու-
րիկս, միթէ մա՛րթ ինչ իցէ ի Գալիլէէ բար-
ւոյ իմիք ելանել» :

Իրա՛ւ էր այս խօսքը . — Ոչ : Վասն զի
այս խօսքն արտասանող Արսէն վարդապետն
այսօր աչօք բացօք կը տեսնէ որ Թորգոմ
վարդապետ կը վարէ վանքը եւ կը խոս-
տանայ Արմաշեաններուն գերբնախորհրէն ըլ-
լալ :

Բայց ինչ որ ալ ըլլայ, Արսէն վարդա-
պետ Արմաշու վանքին աղն ու համն է :
Ուրախ զուարթ է ան, և կ'ուզէ որ իրեն
պէս ուրախ զուարթ ըլլայ ով որ վանքին
մէջ կը գտնուի : Անոր միակ մտածումն այս է
որ երբեմն զինքը կը թախծոտէ, թէ իրմէն
յետոյ արդեօք վանքը իրեն պէս և իրեն
չափ սիրող պիտի ունենայ :

ՎԱՅԱՆ ՎՐԴ. ՏԷՐ — ՄԻՆԱՍԵԱՆ

ԱԶԳ. ՀԻԻԱՆԴԱՆՈՑԻ մատրան չինու-
թեան պիտի ձեռնարկուի ի մօտոյ : Ճարտա-
րապետ Մելիատեան, Լ. Կիւրեղեան եւ Ա.
Էտիսեան էֆ. ները չարթուս մէջ հոն եր-
թալով՝ Հոգաբարձութեան անդամ Յարու-
թիւն էֆ. Ասլանեանի ինչպէս նաև Դէորդ
էֆ. Ասլանեանի հետ խորհրդակցութիւն մը
կատարեցին պատրաստուած յատակածելի
մասին : — Հիւանդանոցի տարեկան նուագա-
հանդէսին նախապատրաստութեանց ժամա-
նակը մօտեցած ըլլալով, Հոգաբարձութիւնը
խնդրած է Ազգ. Պատրիարքարանէն որ
հարկ եղած արտօնութիւնն ստացուի :

Ա Ն Ո Ւ Ն Ո՞՞

Դեզի ի՞նչ անուն արդեօք տայի ես,
Որպէսզի անոր մէջ բոլորովին
Սէրըս խտանար, ու ամենքն ալ քեզ
Կատարելապէս անով ճանչնային :

Հոգի՛ս :— Բայց չատեր իրենց սիրունին
Հոգի՛ս կ'անուանեն : Եւ ես չեմ ուզեր
Որ մէկուն տրուած ածական մը հին՝
Անունիդ կըցեմ սիրահրաւէր :

Արդեօք դիցունի՛ս :— Չէ՛, աս ալ չըլլար .
Թէեւ ձիրքերու կեդրոնացում մ'եւ ,
Թէեւ անթերի ու հրապուրիչ բառ,
Բայց ցնծունիի անուն է կարծես :

Կեանքըս :— Ո՛հ, տափակ, չա՛տ տափակ է ան .
Ո՛չ մէկ բան հեքոտ կեանքէս աւելի
Թերեւս ատած եմ, ու քեզի սակայն
Կ'ուզեմ յատկացնել բառ մը սիրելի :

Ըսէ՛, ի՞նչ անուն տամ արդեօք աղուոր
Որպէս զի անոր մէջ իտէական
Պաշտումս դողդըղայ, ու հազարաւոր
Մարդիկ քեզ ճանչնան ու սքանչանան :

Անունդ , ա՛հ, անո՛ւնդ արդէն կը բաւէ .
Ինչո՞ւ տակաւին փնտրում բառեր,
Որոնք լո՛յս ցայտեն, ըլլան եթերէ,
Ու պաղատանքով համակ տարուբեր :

Վերա , դաշնակութիւն , փրփուր ու նարկիզ՝
Անունդ ասոնցմէ՛ շինուած է գրեթէ :
Բառ մը չե՛մ գտներ, իմի՛ն սիրունիս,
Որ անունիդ չափ քեզ յատկանշէ :

Մ. Ս. ՊԱՐՍՍՄԵԱՆ

ՆՄՈՅՁ-ՄԸ

Էտմոն և Ժիւլ տը Կօնգուռ եղբայրներու Դեռահաս միջակորեարք (La jeune Bourgeoisie) գործէն, զոր հայերէնի թարգմանած ու առանձին հատորով ի լոյս ընծայած է Գր. Էֆ. Մալխաս, կ'արտատպենք գլուխ մը, — լաւագոյններէն մէկը՝ ուր հաճելի ձևի մը տակ պատկերացումը կայ ֆըրանսացի միջակորեար դասի ընտանիքներու բարքերուն, որոնց նուիրուած է արդէն գործը ամբողջ։ Այս արտատպումով՝ նպատակ ունինք գաղափար մը տալ մեր ընթերցողներէն գէթ անոնց որոնք Կոնքուռներէն բան մը չեն կարդացած, այդ անուանի հեղինակներուն ուսումնասիրական ոճին, ինչպէս նաև թարգմանութեանը վրայ, առանց առ այժմ մեր կողմէ բան մը աւելցնելու։ Ըսենք միայն, թէ աւելորդ նկատեցինք հայերէն բառերուն քով դնել նաև ֆրանսերէնները որոնք քիչ մը լրառատօրէն ցանցնուած են այս հատորին մէջ։

Տիար և տիկին Մօրըռէն իրենց սենեակին մէջ էին։ Ճօճանաւոր ժամահարը դեռ նոր զարկած էր կէս գիշեր, ծանր, յամր հարուածներով, կարծես թէ նշանակելու համար մտերմական և ամուսնական աս ժամուն հանդիսաւորութիւնը՝ որ միեւնոյն ատեն ամուսիններուն գլուխ գլխի խօսակցութեան և առանին գործերու գաղտնի խորհրդակցութեան ժամն է։ Կերպարանափոխման և մոգական ժամը, միանգամայն ռամիկ և դիւական, որ կը յիշեցնէ կատուի հոգեփոխուած կնկան մանրավէպը։ Անկողնին ստուերը խորհրդաւոր կերպով կ'աղղէ կնկան վրայ, և անկողին մուտքը՝ տեսակ մը հըրապոյր կուտայ անոր։ Սիրուհիի մոլեկան տռփանքներու մնացորդ մը կը վերադառնայ իրեն, աս վարկենին։ Իր կամքը կը զարթնու այրական կամքին քով՝ որ անհողութեան մէջ կ'իյնայ։ Կինը կը վերականգնի, կը ճանկաւէ, կը մրմալայ, կը խօթօւէ, կը

նեղէ, կը կռուի։ Մարդուն հանդէպ ցոյց կուտայ գգուանք ինչպէս նաև թաթին ճանկերը։ Երեսի բարձր՝ ազդեցութիւն մը կուտայ կնկան, այսինքն՝ մութին մէջ մտնելով՝ կինը կը մտնէ իր զօրութեանը մէջ։

Տիկին Մօրըռէն, հայելին առջև, միայն մէկ ճրագով լուսաւորուած, թուղթէ թիթեռնիկներով կը պատէր մագերուն խապուպիկները։ Խոթանակովն էր, կարճ չըջազգեստովը։ Իր խոշոր մարմինը՝ որուն վրայէն կարճ թեւերը կ'երթային ու կուգային պսակադրութեան շարժուածքով մը, պատին վրայ կը նկարէր յիսուննոց կնկան մը ներքնահագուստով ուրուատեսիլ դիմաստուերը. և իր թանձրամիտ իրանին գէր չուքը այնպէս մը կ'երեւար սենեակին խորը, որմաթուղթին վրայ՝ որ կը յիշեցնէր հինաւուրց տուններու անկողնոցներուն ներսի կողմի ծաղրանկարները, զոր կարծես միատեղ գծած ըլլային Հօֆման և Տօմիէ։ — Պ. Մօրըռէն անկողին մտած էր արդէն։

«Լուի», ըսաւ տիկին Մօրըռէն։

— Ի՞նչ կայ, ըսաւ Պ. Մօրըռէն, անտարբերութեան, տհաճութեան և սրտնեղութեան չեղտովը մարդու մը՝ որ, դեռ աչքերը բաց, կ'ըսկսի ճաշակել հորիզոնական դիրքին վայելքը։

— Օ'հ, եթէ կը քնանա՞ս։

— Չե՛մ քնանար բնաւ։ Տեսնե՛նք, ի՞նչ կայ։

— Օ'հ, Տէր Աստուած, բան չկայ։ Ուրնէին վարմունքը, աս իրիկուն, շատ անպատշաճ երեւցաւ ինծի... ամէնը այսչափ։ Դուն ալ դիտեցի՛ր։

— Ո՛չ։ Ուշադրութիւն չըրի։

— Անհեթեթ մտածում մը... Բեզի չըսա՞ւ բան մը, խօսէ՛։ Բան մը չե՛ս գիտեր։ Վասն զի ձեր թագնասիրութիւնները... ձեր գաղտնիքները տես մինչև ի՛նչ վիճակի հասցուցին զիս։ Միշտ վերջինը կ'ըլլամ անցած դարձածը գիտցողներուն մէջ... Բայց դո՛ւն, ո՛հ, դուն, քեզի ամէն բան կը պատմեն... Շատ բարեբաղդ եմ որ նախանձոտ չեմ ծնած, գիտե՛ս։

Պ. Մօրըռէն, առանց պատասխանելու, ուսին վրայ առաւ ստանը։

«Միտքդ դրիր որ քնանաս, կրկին շա-
րունակեց տիկին Մօքրուէն, յարձակմանը փո-
խարէն պատասխանի մը սպասող կնկան մը
կծու և յուսադուրկ ձայնովը :

— Ըսի քեզի արդէն թէ չէի քնանար...

— Բայց չե՞ս հասկնար ուրեմն, պարոն
Մօքրուէն : Ո՛հ, սա խելացի մարդերը...
զարմանալի՛ բան է : Քեզի ալ կը վերաբերի
սակայն, ասոնք քու գործերդ ալ են ինչպէս
և իմա : Ահա՛ դարձեալ չաջողած ամուսնու-
թիւն մը, կը հասկնա՞ս, ամուսնութիւն մը
որուն մէջ ամէն բան կար... հարստութիւն
պատուաւոր ընտանիք մը... ամէն բան :
Գիտեմ թէ ինչ են դադարի ժամանակները
երբ ասոր պէս կը հասնին, ամուսնութեանց
մէջ... : Կորսուած կրնանք նկատել աս վեր-
ջինն ալ... : Անուի խօսեցաւ ինծի ասոր
վրայ աս իրիկուն. երիտասարդը բան մը չէ
ըսած իրեն բնականաբար. վարուիլ գիտցող
մանչ մըն է... : Բայց Անուի համոզուած է
թէ ան պիտի քաշուի... : Մարդ կըզգայ
աս բաները... մարդուն դէմքէն կը հաս-
կըցուի... :

— Ուրեմն, պիտի քաշուի եղբր, թո՛ղ
քաշուի... ի՛նչ կուզես որ ըսեմ քեզի : Եւ
Պ. Մօքրուէն կանգնելով նստաւ, բարձրուն
վրայ երկնցուց երկու ձեռքերը : «Պիտի քաշ-
ուի եղբր : Ուրվէռօնի պէս երիտասարդներ,
մէկ հատիկ չեն, դեռ կը գտնուին... : Մինչ-
դեռ իմ աղջկանս պէս աղջիկներ... :

— Տէ՛ր Աստուած, աղջիկդ... աղջիկդ...

— Պէտք եղածին չափ արդարութեամբ
չես խօսիր անոր վրայ, Թե՛րեզ :

— Ե՛ս. ես կրցածիս չափ լաւ կը ճանչնամ
անոր լաւութիւնները : Միայն թէ... ես
զինքը կը տեսնեմ ինչպէս որ ան է. քու
աչքերդ չունիմ, ես... : Թերութիւններ ու-
նի, շատ մեծ թերութիւններ՝ որոնց խրա-
խոյս տուիր, այո՛, դու. կամքեր ունի, ան-
խորհուրդ է, իբր թէ տասը տարեկան ըլ-
լար... : Եթէ կը կարծես որ չեմ նեղուիր
մտքի վարանումներէն, պահանջկոտութիւն-
ներէն, խելքի հակառակ շատ մը բաներէն,
ան օրէն ի վեր որ կ'աշխատիք զինքը կար-
գելու : Յետոյ, մասնաւոր կերպ մը ունի

վերէն վար լուալու իրեն ներկայացուած
մարդերը : Անտանելի է աղջկոտեսի մէջ... :
Ահա՛ արդէն տասնի չափ փեսացուներ եկան,
ամէնուն վրայ ալ ստրկելիք բան մը գտաւ... :

Տիկին Մօքրուէնի աս վերջին բառերուն,
հայրական պարծենկոտութեան փայլ մը չո-
ղաց Պ. Մօքրուէնի դէմքին վրայ : «Այո՛,
այո՛, ըսաւ ժպտելով մտքէն. իրաւ է որ
սատանայի խելք ունի... , կը յիշես ան խելճ
գաւառապետը. «Օ՛հ, ծերուկ ջոջ մը. » :
Դեռ կը յիշեմ ի՛նչ կերպով ըսաւ աս, անմի-
ջապէս տեսնելուն պէս :

— Շատ զարմանալու բան է, արդարեւ, և
շատ վայելուչ մանաւանդ... : Օր մը կը
կարգուի աս բառերովը, հաւատա՛... , ա-
սոնցմով ուրիշ անձեր ալ պիտի քաշալեր-
ուին ներկայանալու, այնպէս չէ : Վստահ
եմ որ չարստութեան համբաւ չինած է Ու-
նէն ընկերութեանց մէջ... : Թո՛ղ քիչ մը
դեռ վատնէ աս աղւոր սրամտութիւնը...
պիտի տեսնես թէ որչափ շատ խնդրող պիտի
ըլլայ աղջկանդ համար : Ի՛նչ դիւրութեամբ
կարգեցի Անուիէթս : Իսկ ա՛ս, աս իմ խաչս
է... :

Պ. Մօքրուէն, որ ցայգասեղանին վրայէն
առած էր ծխատուփը, զբաղած կ'երեւար
միայն զայն դարձնելու բութամտտին և ցու-
ցամատին միջև :

«Վերջապէս, կրկին շարունակեց տիկին
Մօքրուէն, իր գիտնալու գործն է... : Երբ
երեսուն տարեկան ըլլայ, երբ արդէն մեր-
ժած ըլլայ ամէնքը, երբ այլ եւս ոչ ոք
գտնուի զինքը ուղելու... հակառակ իր բո-
ւոր սրամտութեանը, բոլոր ձիրքերուն, բոլոր
քու ուղած բաներուդ, Ռենէ պիտի մտմտայ,
դուն ալ պիտի մտմտաս :

Դադար մը տուաւ : Տիկին Մօքրուէն ժա-
մանակ տուաւ որ ամուսինը կարծէ թէ ա-
ւարտած էր խօսքը : Յետոյ, ձայնը փոխելով,
«Հիմա, տղուդ համար խօսելիք ունիմ
քեզի... » :

Ասոր վրայ Պ. Մօքրուէն, որ ցարդ կ'ըսած
մնացած էր կնոջը խօսքերուն տակ, բարձ-
րացուց գլուխը, չարածճի պարզմտութեամբ
կէս մը ժպտեցաւ :

Միջակորեարի դասակարգէն էն վերին ինչպէս և էն ստորին խաւերուն մէջ կայ մայրական տեսակ մը սէր, որ կը բարձրանայ մինչեւ ուժգին ցանկութեան եւ կը խոնարհի մինչեւ պաշտամունքի: Յաճախ հոն կը պատահի մայրեր որոնց գութը կ'երկրպագէ, որոնց սիրտը ծնրադրածի պէս է որդիի մը առջեւ: Չէ ան այլ եւս մայրական սէրը, տկարութիւնները քողարկող, իրաւունքները զօրացած, պարտականութիւններուն նախանձախնդիր, հոգածու՝ ընտանեկան ստորակարգութեան եւ կարգապահութեան, յարգանքով եւ պատուով շրջապատուած: Արու տղան, ամէն տեսակ՝ ընտանութիւններով մօրը կցուած, կ'ընդունի խնամքներ՝ որոնք մեծարանքի կը նմանին, եւ գրգռանք՝ որոնց մէջ ծառայականութիւն կայ: Մայրը անոր կ'ընծայէ իր բոլոր երազները, վասն զի ան՝ ո՛չ միայն ժառանգորդն է, այլ եւ ընտանիքին ապագան, եւ ընտանիքին բերել կը խոստանայ միջակորեարին հարստութիւնները, անոր յառաջդիմութիւնները, սերունդէ սերունդ անոր ձեռք բերած առաջընթաց բարձրացումները: Մայրը կը վայելէ իր որդին՝ անոր ներկային մէջ եւ անոր ըլլալիքին մէջ: Կը սիրէ զայն եւ կը փառաւորուի անով: Անոր կը նուիրէ՝ իր ցանկութիւնները եւ անոր կուտայ իր պաշտամունքը: Աս որդին իր աչքին կ'երեւայ իբր բարձրագոյն էակ մը և իր որովայնը կ'ապշի զայն կրած ըլլալուն համար. պիտի կարենար ըսուիլ թէ խառնիխուռն կը միանան, իր ներսիդին, աստուածամօր մը հպարտութիւնը և խոնարհութիւնը:

Տիկին Մօբըռէն տիպարն էր այժմու միջակորեարի դասակարգին պատկանող այսպիսի մայրերուն: Իր որդւոյն արժանիքը, դէմքը, միտքը, աստուածութեան պէս բան մըն էին իրեն համար: Անոր անձը, վայելչութիւնը, ինչ որ ան կ'ըսէր, ինչ որ ան կ'ընէր, սրբանուէր էր իրեն: Անոր առջեւ կախուած կը մնար հիացմամբ, ուրիշներ անոր քով գոյութիւն չունէին իրեն համար: Իրեն կը թուէր թէ աշխարհ սկսած էր և պիտի վերջանար իր որդւովը: Ան՝ իրեն

համար ամէն բանի լրումն էր, մարդոց էն խելացին, էն գեղեցիկը և մանաւանդ ամենէն երեւելին էր: Անուի կարճատես էր և միագէտ ակնոց կը դորձածէր. մայրը չէր ուզեր ընդունիլ իսկ թէ տղուն տեսութիւնը տկար ըլլար:

Երբ ան հոն էր, մայրը կը դիտէր անոր խօսիլը, նստիլը, քալիլը, կը ժպտէր անոր, երբ ան կ'ունակը կը դարձնէր: Կը սիրէր անոր մեկնոցին ծալքերը: Երբ ան հոն չէր, յաճախ երկար ժամանակ թաղուած կը մնար թիկնաթոռի մը մէջ. անվախճան քաղցրութեամբ ցնորք մը կը լուսաւորէր և քիչ քիչ կը հանդարտեցնէր իր դէմքը. ստուեր, խաղաղութիւն, լոյս միանգամայն կ'իջնէին հոն. նայուածքը երջանիկ էր, աչքերը կը յիշէին, սիրտը կարծես կրկին կը տեսնէր: Եթէ մէկը խօսէր իրեն, ատ վարկենին, արթննալ կը թուէր: Ժառանգականութիւն մը կար մայրական սիրտին աս մենամոլութեանը մէջ: Տիկին Մօբըռէն կը պատկանէր զարմի մը՝ որ որդւոցը համար միշտ տածած էր եռանդոտ, ուժգին, գրեթէ մոլեգին փաղաքշանք մը: Իր ընտանիքին մէջ, մայրերը սասակօրէն մայր կ'ըլլային: Իր մեծ մայրը աւանդութիւն մը թողուցած էր Հօթ-Մառնի մէջ. կը պատմէին թէ հրաբորբոքած ուխով մը խաթարած էր տղու մը դէմքը զոր իրենիչէն աւելի գեղեցիկ կը գտնէին: Չաւ կին մանկական առաջին փոքր ցաւերուն, քիչ մնաց որ տիկին Մօբըռէն խենդենար. կ'անիծէր բոլոր քաջառողջ տղաքը. կը մաղթէր որ Աստուած սպաննէր զանոնք, եթէ իր որդին մեռնէր: Անգամ մը, Անուի հիւանդ եղաւ, մայրը քառասունըութ գիշեր անցուց անկողին մօնելու. յոգնութիւնէն՝ սրունքները ուռեցան: Երբ զաւակը սկսաւ վաղել, ամէն բան ներելի եղաւ անոր: Եթէ զային իրեն զանգատելու թէ որդին ծնած էր գիւղին տղաքը, մայրը կը պատասխանէր գգուոտ ձայնով մը. «Խեղճ մանկիկս»:

Յետոյ, տղան մեծնալով, մօրը հոգին սկսաւ անոր քայլերուն առաջնորդել և կանուխէն յոյսերով լեցնել անոր մարդու կեանքը:

քին ճամբան, Կը մտածէր իր գաւառին մէջ ժառանգութիւն ստացող աղջիկներու վրայ՝ որոնց տարիքը պիտի կարենար վերջէն համաձայնիլ իր տղուն տարիքին հետ: Կ'երեւակայէր տեսնել զայն գլխակներու մէջ, ձիու վրայ, որսի մէջ՝ կարմիր մեկնոց հագած: Անուրջներով և գալիք իրերուն ակնկալութեամբ կը հրապուրուէր:

Եկաւ վարժարան մտնելու օրը, բաժանման ժամը: Տիկին Մօքրուէն երեք ամիս մաքառեցաւ տունը պահելու համար իր որդին, իր քով կրթելու համար զայն՝ դաստիարակի մը ձեռքով: Բայց Պ. Մօքրուէն անդդուելի մնաց: Տիկին Մօքրուէնի ստացած միակ շնորհքն եղաւ որ՝ ամուսինը իրեն թողուց վարժարանին ընտրութիւնը. ան ալ ընտրեց գտնուածներուն մէջ էն մեղմը, այսինքն հարուստ տղաքներու, թոյլ կարգապահութեամբ վարժարաններէն մէկը՝ ուր աշակերտները միւրիւնք կուտան շրջագայութեան ատեն, և ուր դասատուները աւելի կուտան առանձին դաս՝ քան պատիժ:

Եօթը տարիներուն միջոցին որ Անուի հոն մնաց, տիկին Մօքրուէն չանցուց օր մը առանց գալու Սէն-Տնիէն, զայն տեսնելու համար մէկ ժամու զբօսանքին ատենը: Անձրեւը, ցուրտը, յոգնութիւնը, մարմնոյ անհանգստութիւնը, բան մը արգելք չեղաւ իրեն: Խօսարանին մէջ, բակին մէջ, միւս մայրերը զինքը կը ցուցնէին իրարու: Տղան կը համբուրէր զինքը, կ'առնէր իրեն բերուած կարկանդակները, և աւարտելիք դաս մը պատուակելով՝ կը փութար վերադառնալ խաղին: Այսչափը կը բաւէր մօրը: Տեսած էր զաւակը, ան աղէկ էր: Անդադար կը մտածէր անոր առողջութեանը վրայ: Բրդեակներով կը բռնաւորէր զայն: Արձակուրդի օրերուն կը թխկէր զայն միսով, եզի լարերով որոնց արիւնքս բոլոր քամուքը կը խմցնէր որպէսզի տղան մեծնար և զօրանար: Պզտիկ գորգ մը գնեց անոր, որպէսզի շատ կարծր չըզգար դասարանին նստարանները: Վարժարանը սենեակներ ունէր աշակերտներուն յատուկ, տիկին Մօքրուէն կահաւորեց տունը, մարդու սենեակի մը պէս: Տասներկու տա-

րեկան հասակին մէջ ունեցաւ ծիրանեփայտէ արդուզարդի սեղան մը, հեշտադարանով մը:

Տղան եղաւ երիտասարդ, երիտասարդը եղաւ վարժարանէն, և տիկին Մօքրուէնի փառասիրութիւնը անդադար մեծցաւ ան ամէն գոհացումներով միատեղ՝ զորս կը պարգեւէ մօր մը աչքերուն, մեծցած տղայ մը, որուն կերպարանքը կը փոխուի և մօրուքը կը ծլի: Մոռնալով անոր հայթայթիչները որոնց հաշիւները կը վճարէր, տիկին Մօքրուէն կը հրաշանար որդւոյն հագուելու, գլխարկաւորուելու, ագանակու եղանակէն: Անոր սիրած ամէն բաներուն ճաշակին մէջ, սովորութեանցը պերճութեանը մէջ, կերպարանքին, կեանքին մէջ, կար վայելչութիւն մը՝ որուն առջև մայրը կը խոնարհէր սքանչացմամբ և անչափ հիացմամբ, իբր թէ ինք չըլլար աս ամէն բաներուն աղբիւրը և վճարողը: Իր որդւոյն սպասուորը բոլորովին ծառայ մը չէր իրեն համար: Իր որդւոյն ձին բացարձակօրէն ձի մը չէր, այլ իր որդւոյն ձին էր: Երբ որդին դուրս ելլէր, մայրը կուզէր որ լուր տային իրեն՝ որպէս զի ունենար գոհացումը անոր կառք հեծնելը և մեկնիլը տեսնելու:

Մէն մէկ օր, աւելի մեծ կարծիք կունենար իր որդւոյն վրայ: Չունէր զուարճութեան, չունէր երեւակայութեան զբաղում, որովհետեւ չէր կարդար, ծերանալով իր ամուսինին քով ուրկէ բնաւ սէր ընդունած չէր և զայն միշտ զգացած էր իրմէ հեռու, ուսման, քաղաքականութեան, գործերու մէջ ընկղմած. միայն աղջիկ մը մնացած էր իր քով՝ որուն երբեք տուած չէր բոլոր իր սիրտը. վերջապէս տիկին Մօքրուէն կեդրոնացուցած էր իր ամբողջ կեանքը Անուի հարստութեանը, և բոլոր ունայնամատութիւնը՝ անոր ապագային մէջ:

Եւ իր միակ մտածումը, օրուան և գիշերուան ամէն ժամերուն մտածումը, իր անայլալ գաղափարը եղած էր կարգել աս պաշտուած զաւակը, լաւ կարգել զայն, շատ ճիշդ և շատ փայլուն կերպով կարգել որպէսզի աս ամուսնութիւնը միջոց մը ըլլար իր վրէժն առնելու և փոխարէնը ստա-

նալու իր վիճակին տիրութիւններէն և ան-
չըքութենէն, խնայողութեան և առանձնու-
թեան դատապարտուած կեանքէն, կնկան և
ամուսնի իր ամէն զրկանքներէն :

«Գոնէ դիտե՞ս որդւոյդ տարիքը, պարոն
Մօրըռէն, կրկին չարունակեց տիկին Մօրըռէն :

— Անոխն, բայց, սիրելիս, Անոխն ըլլա-
լու է... 1826ին ծնաւ, այնպէս չէ :

— Օհ, հօրմէ մը զատ ուրիշէ չսպասուիր
ատ հարցումը... այո՛, 1826ին, 12 յուլիս
1826ին :

— Ուրեմն, քսանրինը տարեկան է : Իրաւ,
տե՛ս, քսանրինը տարեկան եղաւ :

— Եւ թեւերդ ծալած դեռ այդպէս կը
կենա՞ս : Եւ ո՛չ իսկ հոգ կ'ընես անոր ապա-
գային : Պարզապէս կ'ըսես. Իրա՛ւ, տե՛ս,
քսանրինը տարեկան է, սապէս, հանդարտո-
րէն : Ուրիշ մը պիտի երերար տեղէն, պիտի
փնտռէր : Անոխն քրոջը պէս չէ, կարգուիլ
կուզէ : Երբեք խորհեցա՞ր դաճելու յարմար
միութիւն մը, կին մը : Եւ ոչ իսկ չօթէն-
թօթցի իյխանի մը համար : Անդրանիկ աղ-
ջըկանդ համար ալ այդպէս եղաւ : Կը հար-
ցընեմ թէ ի՞նչ ըրիր անոր ամուսնութեանը
համար : Թող դաճէ, թող չի գտնէ, կարծես
երկուքն ալ հաւասար են քեզի : Ի՛նչ քա-
շեցի զքեզ մշտելու համար որպէս զի քա-
լես : Ա՛հ, կրնաս վրադ չառնել անոր ամուս-
նութեանը պատասխանատուութիւնը. պէտք
չէ որ աղջկանդ երջանկութիւնը խղճի խայթ
ըլլայ քեզի : Առանց ինծի, պիտի գտնէիր
դուն, այնպէս չէ՞, Պ. Տափառանտի պէս
փեսայ մը... որ կը պաշտէ Անուիթը... և
ինչ ընկերասէր մարդ... էրիկներուն օրի-
նակելին :

Եւ տիկին Մօրըռէն, մարելով ճրագը,
սահեցաւ անկողնին մէջ Պ. Մօրըռէնին քով՝
որ դէպի փոքր անցքը դարձած էր, քիթը
պատին :

«Այո—ըսաւ դեռ, սաւանին տակ եր-
կըննալով,— օրինակելի էրիկ մը : Եթէ կը
կարծես որ ուրիշ շատ ամուսիններ անոր
պէս պիտի պատուասիրէին զմեզ : Պաքի օր
միս կը կերցնես անոր, երբ մեր առւնը կը

ճաշէ, և ան բան մը չըսեր : Հաճոյակատա-
րութիւն մը ունի որ... Վերջերս, ձեռագործի
բուրդ կը պակօէր, նոյն տեսակէն պէտք
ունեցայ... :

— Կը ներե՛ս, սիրելիս, խօսքերնիս ի՞նչ
քանի վրայ է : Կ'իմացնեմ որ քիչ մը փա-
փաք ունիմ աս իրիկուն քնանայու : Աղջի-
կէդ սկսաւ պատմութիւնդ : Հիմայ Պ. Տա-
փառանտի կատարելութիւններուն էջը կը
բանաս : Գիտեմ ատ էջը : Մինչև վաղն ա-
ռաւօտ կը տեսէ : Հասկցանք, փափաքդ է
որ տղադ կարգուի, այնպէս չէ՞ : Աս է ու-
զածդ : Ուրեմն իմ ուղածս ալ ատ է. կար-
գենք :

— Ասանկ ըսելովդ իբր թէ մարդ կարե-
նար վստահիլ խօսքիդ, դայն կարգելու հա-
մար : Ո՛րչափ կը չարչրկես ինքզինքդ : Ո՛ր-
չափ ինքզինքդ անհանգիստ ընելու մարդ ես :

— Ա՛լ բաւեց, սա ըսածդ, սիրելիս, անի-
րաւութիւն է : Ինծի այնպէս կուգայ որ
տաճարհինգ օրէն աւելի չեղաւ որ կրցածս
ցցուցի : Ծատ նեղանալի Օթէռա մը մօտիկ
ընելու երթալ... , գիշերը պողպաղակ ու-
տել, բան մը զոր չարաչար կ'տեսեմ... խօ-
սակցիլ անձրեւին եւ աղէկ օդին վրայ այն-
պիսի գաւառացիի մը հետ որ պուլլառնե-
րուն վրայ բարձրաձայն կը պօռար թէ իր
աղջիկը օթիտ ունէր... : Եթէ աս ըրածս
դուն կ'անուանես չձգել իր գործը ուրիշի
համար... Պիտի ըսես թէ չաջողեցաւ : Բայց
յանցանք ի՛մա է, եթէ ան պարոնը իր աղ-
ջկանը համար կը փնտռէր «փստաւոր արու
մը», ինչպէս ինք կ'ըսէր : Ի՛մա է յանցան-
քը, մինա՞կ իմա, եթէ մեր որդին չունի Հե-
րակլէսի մը չիմուածքը :

— Պարոն Մօրըռէն :

— Ծշմարիտ է վերջապէս... , ես եմ ա-
մէն բանի յանցաւորը, քու կարծիքովդ... :
Եսասէրի մը տեղ պիտի դնէիր դիս... :

— Օհ, տէ՛ր Աստուած, բոլոր էրիկ մար-
դոց պէս :

— Ծնորհակալ եմ անոնց կողմէն... :

— Ո՛չ, քու բնաւորութեանդ մէջն է
ան... պէտք չէ ասոր համար քեզի ռիս պա-
հել : Մայրերուն միայն արուած է նեղել ինչ

բենք զիրենք: Ա՛հ, եթէ ինծի պէս ըլլա-
յիր, եթէ ամէն վարկեան աչքիդ առջեւ
բերէիր բոլոր ան բաները որոնք կրնան ե-
րիտասարդի մը պատահիլ: Ազէկ գիտեմ որ
Անուի մտացի է. բայց ի՞նչ շուտ կը կապուի
երիտասարդ մը... խառնակեաց կին մը, ա-
նարգ աղջիկ մը... չգիտեմ դեռ ի՞նչ...
ասանկ բաներ ամէն օր մարդ կը տեսնէ:
Հաւատա՛, պիտի խենդենայի: Ինծի նայէ՛,
Մօբբէն, եթէ տիկին Ռօզիէնին միտքը
հարցնել տայինք, հէ՛՛:»

Պատասխան չելաւ: Տիկին Մօբբէն
յանձն առաւ լռել, մէկ կողմ դարձաւ, միւս
կողմ դարձաւ, քուն փնտռեց և առտուն
լոյսին միայն գոցեց աչքերը:

ՍՐՏԵՍ ԵՐԳԵՐԸ

ԵՐԲԱՐ ՄԵՍՆԱՍ...

Անմեղութեանդ մէջ կայտնէ
Մանուկ աղուոր աչքերով,
Դեղ պահապան երկնատուր
Մայրիկիդ սէրն ու գորով:

Երջանկութեան ջինջ վտակ՝
Աղուոր աչքերըդ ծախ՝,
Կը ժպտին յար, անգիտակ
Տառապանքի ու ցաւի:

Ժըպտէ դու դեռ, զի վաղը
Երբոր մեծնաս, ա՛հ, գուցէ,
Սիրոյ ցաւ մը խոր, անգո՛ւթ,
Աղուոր աչքերըդ գոցէ...:

ՁԻՒՆԷՆ ՎԵՐՁ

Դիչեր է մութ. կ'ունկընդրեմ
Վայրագ հովի մօռնջին.
Յորձանքներով թափառիկ՝
Ճերմակ ձիւներն կը թռչին:

Խոր լռութիւն ամէն տեղ.
Անհուն պատահք մը ձիւնի...
Այդ պատանքէն, վաղը, նոր
Աղուոր դարուն մը ծընի...


Հոգիիս մէջ տխրամած՝
Ձիւն մը տեղայ ցնորուն,
Այլ այդ ձիւնէն վերջ, բարէ՛,
Ո՛չ ծաղիկ կայ, ո՛չ գարուն...

ՀՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ԽԱԹԻՐ ԼՈՒՍՈՒՆԻ ԿԵԴՐՈՆԱ-
կան նամակատունը անորինակ գործունէու-
թեան մէջ էր. հազարաւոր պաշտօնեաներ
աշխատեցան միլիոնաւոր նամակներ տեղա-
ւորելու համար. Սովորական շաբթուան մը
մէջ, Կեդր. նամակատունը 30 միլիոն նա-
մակ և լրագիր կը հաւաքէ և 20 միլիոն կը
յանձնէ: Այս շաբթու գումարը կրկնապատ-
կուած, գրեթէ եռապատկուած էր: Սակայն
թղթատարական վարչութիւնը կրցաւ ժա-
մանակին շրկել բոլոր նամակները և ծրար-
ները, 7000 յաւելուածական պաշտօնեաներ
վարձելով:

Անգլիայէն գլխաւոր գաղթավայրերը եւ
աշխարհի հեռաւոր վայրերը շրկուած Ծնուն-
դի ծրարները ճամբայ հանուած էին մէկ եր-
կու շաբաթ առաջ, բայց մինչև Ծնունդի
նախընթաց օրը դեռ բուտինկներ կը յանձ-
նուէին նամակատուն: Ամէն տարի ահագին
թուով բուտինկներ կը շրկուին աշխարհի
մէկ ծայրէն միւսը: Բուտինկներուն մեծ մասը
կ'երթայ Ամերիկա եւ Եւրոպայի ամէն կող-
մերը: Արտասահման բնակող օտարազգիներն
ալ զանազան նուէրներ կը շրկեն իրենց
անգլիացի բարեկամներուն: Այսպէս, Ֆրանս-
սացիները կը շրկեն չորցուած պտուղներ,
ծաղիկներ, շոքոլաններ և շաքարեղէններ:
Դերմանիա կը շրկէ գլխաւորաբար երչիկներ
և հաւեղէններ, Սպանիա՝ գինիներ, Հունի-
սա՝ սիկառներ եւ տեսակ մը կարկանդակ,
Չեխոսլովակիա՝ տուփերով շոքոլա, Իտալիա՝
չորցուած պտուղներ և նմանօրինակ քաղց-
րաւենիներ, Ռուսիա սիկառներ: Մ. Նահանգ-
ները սովորաբար շատ պզտիկ ծրարներ կը
շրկեն:

ԲԱՐԻՔԻՆ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ



Ամանորին և Ծնունդի տօնին մերձաւորութիւնը՝ ուրիշ որ և է ժամանակէ աւելի հանրային ուշադրութիւնը կը դարձնեն բարիք գործելու, չքաւոր ընտանիքներու, բաղ-դազուրկ տղոց նպաստելու պէտքին վրայ. և պէտք է ըսել թէ, Պոլսահայ համայնքին ունեւոր դասակարգը՝ թէ՛ անհատապէս, թէ՛ թաղ. խորհուրդներու և Աղքատախը-նամանորու միջոցաւ իր ձեռնտուութիւնը չի զլանար:

Պատրիարքական հետեւեալ շրջաբերա-կանը, որ ղրկուեցաւ բոլոր եկեղեցիներուն և հրատարակուեցաւ օրաթերթերուն մէջ ալ, հայրական հրաւէր մը և յորդոր մըն է ողոր-մածասիրութեան, որ իր զգալի արդիւնքը պիտի ունենայ, ինչպէս ամէն տարի:

ՄԱՂԱՔԻԱ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Խաբէպատեօն սիրելեաց, հաճուց ազ-գայնոց մալրաբաղախս. — Դրիստոսի շնոր-հաբեր Ս. Ծննդեան տօնը բարեպաշտներու յիշեցուցած է միշտ այն գերագոյն պարտքը, զոր ամէն ոք ունի իւր ձեռին բաւականու-թեան չափով օգնութեան հասնիլ կարօտե-լոց եւ խղճալեաց:

Ուրախութեան առթիւ ընկերն ալ ուրա-խացնել, իւր համեստ վայելից ուրիշն ալ մասնակից ընել, սիրոյ օրէնքին գերազանց պարտաւորութիւնը կատարել, ողորմածնե-րու խոստացուած վարձքերուն արժանա-նալ, ամէնքնիս ամէն ատեն կը փափա-քինք, բայց տօները եւս քան զեւս մեզ կը յորդորեն, մեզ կը ստիպեն:

Կաղանդը իւր բարեբաւարիկ սկզբնաւո-րութեամբ, Ծնունդը իւր առատաբաշխ շը-նորհօք և փառաւոր յայտնութեամբ կը խօ-սին սիրտերու:

Ձեր սիրտն ալ, Սիրելիք, գիտեմ, պատ-րաստական եղած է ամէն տարիներ, բայց իմ պարտքս է նորէն զայն յիշեցնել ամենե-ցուն ընդհանրապէս և ձեզմէ իւրաքանչիւ-րին մասնաւորապէս, որպէս զի Ծննդեան առթիւ աղքատաց և տնանկաց, կարօտելոց

եւ խղճալեաց օգնութեան համար տալիք ձեր տարեկան նպաստը՝ օր առաջ յանձնէք ձեր թաղին եկեղեցւոյն Պատուարժան Խոր-հուրդին եւ Աղքատաց Խնամակալութեան, որպէս զի անոնք ալ կարենան տօները չհա-սած բաշխել արժանաւորաց, և ասոնք ալ կարող լինին ժամանակին ինչ որ իրենց պէտքն է հայթայթել, իրենք ալ ուրախու-թեամբ տօնը կատարել, եւ իրենց բարե-րարները եւ ողորմած նուիրատուները օրհ-նել և անոնց համար աղօթել:

Տէր Յիսուս, որ աղքատին եղածը իբր իրեն եղած կ'ընդունի, հաճի ձեր ղուարթառատ ողորմութեանց, օրհնէ զձեզ, օգնէ ձեզի, յաջողէ յամենայնի, զերծ պահէ յամենայն ձա-խորդութեանց, եւ մխիթարէ զձեզ զարմօք եւ զաւակօք, մերձաւորօք եւ պարագա-յիւք:

Օրհնածայն եղջուցիւ սիրոյ մնամք

ՊԱՏՐԻԱՐԷ Կ. ՊՈԼՍՈՅ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Տուեալ ի Պատրիարքարանէս Կոստանդ-նուպօլսոյ 8 Դեկտ. 1905 տարւոյ:

Յրտաշունչ եղանակը՝ զուգադիպելով տօնական օրերուն, գրգիռ մը կըլլայ աղ-քատախնամ գործին, նպարեղէնի ու ածուխի բաշխումով. Սկիւտարի երեք թաղերու Աղ-քատախնամը արդէն իսկ ածուխ բաշխած է 400 կարօտ ընտանիքներու և մօտէն գիտենք թէ Բերայի Աղքատախնամը՝ իր օրինակելի գործունէութեամբ՝ ինչպէ՛ս օգնութեան ձեռք կը կարկառէ այդ մեծ արուարձանին կարօտ ընտանիքներուն, միանգամայն դեզ ու դարման հասցնելով աղքատ հիւանդնե-րուն: Այսպէս նաև, Դում—գարուի, Սամա-թիաի և ուրիշ բազմամարդ թաղերու Աղ-քատախնամները:

Լրագրութեան համար ալ քաղցր պար-տականութիւն մըն է, այս եղանակին, իր էջերը բանալ՝ բարեգործական հրաւէրներու և ինքնայատուկ ցարեգործութեանց արձա-նագրութեան, որուն կը յատկացնենք, մեր մասին, «Բարիքի Յուշատետր» մը, տարին գէթ մէկ—երկու անգամ: Եւ քանի որ ա-

առիթը ինքնին կը ներկայանայ, քանի մը տող պիտի նուիրենք մասնաւորապէս աղքատիկ դպրոցականները հագուեցնելու աւանդական բարի սովորութեան, որ հետեղհետէ աւելի վայելուչ ձև մը կ'առնէ: Ատեն մը, Ջատկի և Մ'նունդի այդ հանդերձալի նութիւնը շատ նախնական վիճակի մէջ էր: Երկրորդական դերձակ մը՝ միագոյն ու միաձև հագուստներ կը պատրաստէր տղոց որոնք խթման իրիկունը դասին մէջ երթալ կարգով կենալու պարտաւոր էին, իրենց աղքատութիւնը և վայելած բարիքը ցուցադրելու համար կարծես: Այդ բարքերն ու սովորութիւնները բարեփոխուած, ազնուացած են հիմայ, օրինակը Բերայէն տրուելով:

Ինչպէս անցեալ տարի, այս անգամ ալ օրաթերթերը ծանուցին թէ՛ Բերայի Թաղական խորհուրդի ատենապետ Վսեմ. Ռօպէր էֆ. Եաղքեհաճի նախաձեռնութեամբ՝ եւ բարեսէր անձերու նպաստներով, — որոնց մէջ իր բաժինն ալ ունի Թաղ. Խորհուրդը, — մէյմէկ ձեռք զգեստ շինել տրուած է Էսսեան վարժարանի 50 երաժիշտ եւ 50 դպրոցական աղքատ տղոց, գնուելով նաեւ ֆէս, կօշիկ, գուլպայ եւայլն. նոյնպէս չորս ջազգեստ եւայլն 35 աղքատ աղջիկներու, և Նարեկեան մանկապարտէզի ու Տօլապ-Տէրէի փոքրիկներուն ալ գոգնոց, կօշիկ եւն. : Ռօպէր էֆ. սա նորութիւնը մտցուցած է այս աղքատօրեական գործին մէջ, որ տղաքը պատրաստ հանդերձեղէնի վաճառատուններ կ'առաջնորդուին, խումբ խումբ, եւ իւրաքանչիւրը իր հաւնած հագուստը կը ստանայ, իր մանկական արժանապատուութիւնը գգուուելով, եւ կը մեկնի գոհ եւ ուրախ:

Մարդասիրական բոլորովին ինքնատիպ դրութեան մըն ալ օրինակը կուտայ ինքնաբերաբար Վսեմ. Գրիգոր խան Շամտանձեան, տարիներէ ի վեր, ո՛չ միայն նոր ու գեղեցիկ հագուստներ նուիրելով աղքատիկ զըպրօցականներու, այլ եւ Կաղանդի Սեղանի հրաւիրելով զանոնք Ամանորին օրը, և ինք՝ իր Տիկնոջ ու զաւկըներուն հետ ներկայ գտնուելով այդ սեղանին, որ համադամներ

եւ պտուղներ կը մեծարուին դեռատի հրաւիրեալներուն և Կաղանդի նուէրներ ալ կը բաշխուին: Անցեալ տարի Բերայի աղքատ տղաք վայելեցին այս հրճուանքը. այս տարի ալ անշուշտ ուրիշ թաղի մը չքաւոր դպրոցականները պիտի վայելեն: Երեւոյթը նոր է ու պիտի արժէր ծանրանալ անոր վրայ՝ եթէ Գրիգոր խանի համեստութիւնը վերաւորելու երկիւղը չըլլար:

Ո՛չ միայն բարիք գործել աղքատներուն ու փոքրիկներուն, այլ եւ բարեգործութեան է՛ն ափոխարար ու է՛ն ազնուագոյն եղանակը ընտրել. — Ահա՛ ինչ որ երեւան կու գայ այս յիշուածներուն մէջ, որոնց ընդհանրացման թերեւս նպաստեն այս կարգի հակիրճ նօթագրութիւնները զորս թերթի մը համար հաճոյք մըն է կատարելը:

Պիտի շարունակենք «Բարիքին Յուշատեար»ը, երբ առիթները ներկայանան:

ՄՏԵՐՄԻԿ ՏԵՍԻԼՆԵՐ

... Ու կը դառնան ջրբանիւններ ծերունի, Կափկափելով համբարուի հեքեաթնին, Թախծապատում բարբառի հոճ կշռութիւն՝ Որ կ'ակօսէ լուռն Աշնանի—Գիշերին:


Ու մարմանդին դիմրիւթ՝ պայիկն օգանոյշ Նոր կը հագնի լոյսի մետաքս թելերով Շարամանուած պատմութեան իր մըշուշէ՝

Ուր մերթ շողակն օդաքարին կը վառի:

Ու բոժոժին ձայնեղ՝ գանգիւնն արծաթէ... Ու սայլօրդին ըստուերն որ՝ գո՛ր՝ կ'երկարի Ու սիկառին ծուխն որ բիլ բիլ կ'ամպանայ՝ Ու լաղուարթէ գիծը ճամբուն հեռացող...

ԻՐԵՍԱՅ ՄԵՆԱՐԵՆՑ

ԳԱՐՆԱԿԵՕԶԵԱՆՑ ՆՈՐ ՍՈՒԳՐ



ՄԱՀ ՏԻԿԻՆ ԷՖՏԻԿ ՊԱՄԱՃԵԱՆԻ

Գարակէօզեան ընտանիքը որ հազիւ չորս ամիս առաջ ողբաց կորուստը իր պետին՝ Դրիգոր Էֆ.ի, նոր սուգով մը համակուեցաւ այս չարթու, կորսնցնելով իր երիցագոյն անդամուհին՝ Տիկին Էֆտիկ Պ. Պամաճեան՝ հորաքոյրը Եղուարդ, Թագւոր, Արամ, Արշակ, Միհրան և Սարգիս Գարակէօզեան Էֆէնտիններուն։ Հանգուեցաւ Տիկինը կանուխէն կորսնցուցած էր իր ամուսինը, ինչպէս նաև իր մէկ աղջիկ զաւակը՝ փաստաբան Յակոբ Էֆ. Յակոբեանի կինը։ Իր օրինակելի պարկեշտութեամբ, ողորմածասիրութեամբ և բարեպաշտութեամբ յարգելի յիշատակ մը կը թողու Տիկին Պամաճեան որ կարօտ ընտանիքներու կը նպաստէր և չքաւորներուն ձեռք կը կարկառէր՝ բոլորովին համեստօրէն, առանց իր անունն յեղյեղուելու։ Այնպէս որ իր մահը կ'ողբան այսօր ո՛չ միայն իր զաւակները, եղբորորդիներն ու ընտանեկան բոլոր պարագաները, այլ և ամէն այն ընտանիքները որոնք վայելած էին իր բարեգործութիւնները։

Յուզարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ հինգշաբթի առաւօտ, Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցին, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր որուն շուրջը կը կը գտնուէին Տ. Բարթոլոմէոս արքեպիսկոպոս, Տ. Հմայեակ Դիմաքսեան և Տ. Դէորդ Ե. րէցեան եպիսկոպոսները, Պատր. Փոխանորդ Տ. Գաբրիէլ եպիսկոպոս, Երուսաղէմի Պատր. Փոխանորդը և ուրիշ վարդապետներ ու քահանաներ։

Տաճարը լուսազարդուած էր շքեղապէս ու մահաբեմի մը վրայ կը հանգչէր դազաւը՝ շքեղ ծաղկեփունջերով ծածկուած զորս զրկած էին ընտանեաց անդամները, Աղքատախնամներ և այլն։

Յուզարկաւորներու ստուար բաղմութեան մէջ, որ լեցուցած էր եկեղեցին, կը նշմարուէին Բողոքականաց Աղգապետ Էֆէնտին, պետական հայ պաշտօնատարներ, առեւտրա-

կան ու սեղանաւորական դասը, փաստաբաններ, բժիշկներ, Պատրիարքարանի Ժողովականներ և ուրիշ ծանօթ անձնաւորութիւններ։

Արարողութեանց աւարտումէն ետքը, որոնք կատարուեցան դաշն և հանդիսաւոր կերպով, դազաւը թափօրով դուրս հանուեցաւ տաճարէն և փոխադրուեցաւ դրան մօտ ուր «Հօգւոց» կարդաց Ս. Պատրիարքը։ Հոն ներկայ եկեղեցականներն ինչպէս յուզարկաւորները ցաւակցութիւն յայտնեցին Գարակէօզեան Արշակ, Եղուարդ և Արամ Էֆէնտիններուն, որոնք սգակիր կեցած էին, ինչպէս նաև Յակոբ Յակոբեան, Յակոբ Էսահան Էֆ.ներուն և ընտանեկան պարագաներուն։ Յետոյ, դազաւը մեղակաւաւորով փոխադրուեցաւ Շիրիլի ազգ. դերեզմանատունը ուր հետեւեցան անոր յուզարկաւորներէն շատեր՝ Գարակէօզեան Տեարք հետ։

Խմբադրութիւնս ալ կը փութայ այս տխուր առթիւ իր ցաւակցութիւններն յայտնել Գարակէօզեան Տեարք և Տիկնանց որոնք համակիր վշտակցութեան անկեղծ արտայայտութիւններ ստացան՝ իբրև հաւաստիք մը այն յարգին զոր կը վայելեն թէ՛ իրենց ընկերային ազնիւ ձիրքերովը և թէ՛ հանրային բարեգործութեան մէջ իրենց ունեցած լայն բաժինովը որուն կը միացնեն անձուէր աշխատութիւն և հոգածութիւն՝ բարեկատուակ հաստատութեանց և մասնաւորապէս Գալֆայեան Որբանոցին։ Կը ցաւակցինք նաև Յակոբ Էֆ. Յակոբեանի, և Ֆնտզեան, Ճէվահիրճեան ու Սըքըհան ընտանիքներուն։

Տիկին Էֆտիկ Պամաճեանի յուզարկաւորութեան առթիւ հետզհետէ նուիրատուութիւններ կըլլան Ազգ. Հիւանդանոցին, փոխան ծաղկեպսակի, որոնց առաջին գումարը 50 ոսկին կ'անցնի։



Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տէր ԷԼ ՏՃՕՐԷԿ—ՏՈՒԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒՅԷՐ Օրագրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳԻՐԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲՄԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Քր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայեալ աւելանումներուն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեռով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի զեւրոպայէն քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան Ձերժ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍՍԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասուցն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԻՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրըք Օղլու

Մասնաճիւղ Դալաթիա, Իսայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

9-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳԻՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԷՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՐԿՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԵՐ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արեւաճման (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւորն է Ի Կ. Պոլիս, Գոթի Լիօն

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասենակ, Պոլիս, Ալեքսան Խան,

8-10

PHOENIX ASSURANCE L Co.

“Ֆ ի ն ի ք Ս”



ՀԻՄՆԵՍԱԼ Ի ԼՈՂՏՈՆ 1782 ԻՆ
ՆԸ ԳՈՐԾԻ Ի ՊՈԼԻՏ 1869ԷՆ Ի ՎԵՐ
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Իրամագլուխ եւ պահեստի դրամ

. ՈՆԳԼ. ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահո-
վագրեալն Ընկերութիւն մըն է, ինչպէս
իւր պատուաւորութեամբ եւ վնասուց մէջ
իւր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէկն անսակ մշտաբար եւ
չարժուէն օտարութեամբ, յայտ նպատակաւ
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.
ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ. Յ.ա՛դ. վճա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
ֆունտ:

Ընդհ. գործակալ Պայռ, Կ. Գ. ԿԱՐԴԱՆԵԱՆ
Վերալիս խան, Պանք Օթմանի վո
Ղայաքիա:

Փոխ գործակալ Ի Պայռ
ՌՈՒՐ. ԱՅԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԷՔԷԵԱՆ
Էմիւն պէյ խան Գնացիւան իս Կի
Ջնէիլ բիւրոյն

5-10

Ա. ԷՆՔԱՆԻՐՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՔՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ՛մ
Գե. Եե. Շր. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11½
Բե. Դե. Ուր. օրերը ցեմ մինչեւ 11½
Կիրակի օրերը ժամագրութեամբ 4-10

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔՏՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷՆ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման բոցակի միւղեր
VICTORIA ՎԻՔՏՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւննե-
րուն վճարումները չաթաթական մասնավճարներով առդի կուսենան,
սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1904ին Ֆր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ին » 605,718,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
քայականհրովարակալ եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէն:

ԸՆԿ. ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիազոր Ընդհ. Ներկայացուցիչ
Ա. Կ. ԼԻԻՉԷՆԱ

Կալաթա, Պերեքէր խան

Օրիանդ-Պանքի դիմ

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐԾԷ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՖՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեցաւ համեմատութիւնն է 74%, որով ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ, ուրիշ ընկերութեանց ցոյց առած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծրանաւորի ժողովին նշանաւոր դրամատէրներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծրանաւորի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ, Դրանաւորական ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԵՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքոյ Տնօրէն Ք. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համամ, Բասափ Բաթըլճըօղլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.— Շահաւոր դիմել պիտի տրուի այն ֆինիչին որ կաշուոր արգիւնէմը իր ազորած քլլայ սննդապէս:

7—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Այէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար առօրիններէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հին եւ նոր դաշիական տխուրը, Այս վերջին տխուրը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն մեթաներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի յայն օր կէս օրէ վերջը, Զորեքշարժի օրերը միայն ճրի: 7—10

ԴԵՐՁԱԿ

ՎԻՉԷՆ ԱԼԱՃԱԵԱՆ

Ղալաքիա, Հարանցը փողոց. քիւ 39

Լաւ տեսակ կեղտոտներով ու ճնշուած հագուած առարկաներ, ալ ուղղները, որոնք միանգամայն ծանուցիւն կը փնտրուին եւ վճարման գիւրիչ պայմանէն, կըրնան դիմել ալ նոր բացուած խանութք, Բ. մեծապէս զոհ պիտի մնան:

1—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԱՆԷ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵՒԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի վաճառատունը՝ գահարդէններու, սփի եւ արծաթ շքաներու, գրպանի, պատի եւ քօնօրի ժամացոյցներու մասնաւոր վաճառատէն դատ, իր բաղձաթիւ յաճախորդներուն վաճառութենէն քաջալերուած՝ այս անգամ կը փութայ յայտարարել թէ ամէն եղանակի յառուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց եւ աղջից համար ամէն տեսակ հագուաներ ու անձրեւի համար մուշամպա վերաբեռներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ եւ թօփէտներ ու ամերիկեան կօշիկներ, Ունի նաեւ կակաօրաւի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգլիական գէր, գեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիտիքլէթներ՝ ամենավերջին կառարելու թիւններով։

Հէրճայի վաճառատունը իրականացնո՞ւ ու լայնօրէն շահած է հանրութեան վաճառութիւնը եւ գահայնակութիւնը իր ապրանքներուն տակաւնութեան եւ անկիներու մօքրութեան. ձեւաւորութեան եւ օժտութեան համար։

Այս ամէնուն սքանչել արժէքին վաճառումն է

ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ. իսկ մնացեալ գումարին (աւար շտապութեան հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հալթալթել։

Վաճառատունն հաստատուած է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐՉՍՑ ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այդեղիլ բուսկան է համազուելու համար թէ՛ Հէրճայի անմրցելի կաշմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գահայնել իր ամէնէն դժուարահոն յաճախորդները։

Կանխիկ գնողներու նամար հարիւրին 5 զեղչ։

Սակարկութիւն չկայ։

Եւրոպական վճարման համար հաւաքչներ միշտ պատրաստ են։

5—10



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուղարկուած արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ յէնքը

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութեան կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ-ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՐԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՐԵԿԱՌՔՈՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԱՌՔՈՒՆ ԴԷՄ։

Ընկերութեան ղրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 *

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամա-

355,840,000 »

գլուխ եւ վստասց հատուցում

64,553,800 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուցո

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ագարեան խան, Վոյվոսա, Ղալա թիւ, 1—10